

891.710

0-21

1928A.

3894.71-5

0-21

ԱՅԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՊԻԱՆԵՐԱԿԱՆ ԱԵՐԻԱ

ՈԴԱՉՈՒ ԱՐԱՄԸ

Փոխագրեց Ս. ԲՈԳՈ. ՏԵՐԵՍՈՒՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ — 1928

30 MAY 2011

891.770

0-21

ԿՈՄՅԵՐԵՍԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Կ/

ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ՈԵՐԻԱ

ՈԴԱՉՈՒ ԱՐԱՄԸ

Փոխագրեց Ա. ԲՈԳ-Օ.ՑԵ-ՀՅՈՒ

Պետական Հրատարակչություն. Եղեմակ - 1928



Ա.

— Պատմիր մեզ մի լավ բան, պատմիր, քեռի. Ստեփան, — կանչեցին մանուկները ու խրճիթ-ընթերցարանից քիչ հեռու ընկած փոքրիկ մարդկանի վրա շրջապատեցին հաշմանդամին և, նստեցնելով նրան գորդի նման թավ կանաչ խոտի վրա, ծվարեցին նրա շուրջը:

— Դե պատմիր, պատմիր, քեռի-Ստեփան:

— Ի՞նչ պատմեմ ձեզ, այս չարաճճիներ:

— Ա՛յ, այերոպղանի մասին: Դու նրանով թռել ես, դու գիտես:

— Ախր, բալեքս, դրա մասին պատմել եմ ձեզ:

— Ելի, ելի յենք ուզում: Ա՛յ, հիմա ասա մեզ՝ կարելի յե ալդ այերոպղանով թռչել լուսնի վրա. Ճանապարհին փորձանք հո չի պատահի:

— Ա՛խ դուք չարաճճիներ, — ժպտում ե քեռի. Ստեփանը, — քանի անդամ եմ պատմելու ձեզ նույն բանը, չհոգնեցի՞ք:

— Մենք լավ չենք հիշում, պատմիր:

— Դե քիչ աղմկեցեք, վոր պատմեմ:

— Լույ:

— Այդ այերոպլանը շատ մեծ է, քեռի. Ստեփան, մեր սալի՞ չափ կլինի, թե խրճիթի:

Քեռի. Ստեփանի գեմ նստել եր դարբին Սահակի տղան՝ Արամը. հասակով նա մեծ է բոլորից: Աչքերը հառած Ստեփանին՝ նա լսում է հետաքրքրությամբ, զանգուր մազերը ծածանվում են հովից, և նրա ուղեղում մեկիկ-մեկիկ մխվում են քեսի Ստեփանի խոսքերը: Ո՛, ինչպիսի մտքեր են ծնվում այդ զլխում, և վրբքան շատերն են իրագործվել նրանցից: Նա պատրաստել է հողմաղաց, փոր փոքրիկ խաղալիք եր, անիվեր ուներ, թերե ել ու բանում եր խականի նման: Գլուղացիները միայն շարժում ելին իրենց զլուխները: —

— Խելոք, հնարագետ տղա յե. — ասում ելին նրանք...

Յեվ այժմ ել վառվում մաքերի մի ամբողջ շարան կա նրա գլխում, փորոնք անվերջ հաջորդում են միմյանց: Այդ մտքերը նա հայտնում է միայն քեռի. Ստեփանին, յերբ յերկուսով մենակ են մնում:

Շատ բան գիտե քեռի-Ստեփանը, միայն թե ցանկանա քեզ ոգնել, այնպես կանի, փոր գործդդրի նման կզնա... .

— ...Յեվ ալսպես, տիսպեր ջան, նստեցինք. — սկսեց քեռի-Ստեփանը. — յես ու ընկերներս,

բոմբերով: Թռչում ենք, ախպեր ջան, վճնջ ենք թռչում. ներքենում գյուղերը ծտի բների նման կպել են տափին: Մինչև անգամ խղճում ես խեղճ մարդկանց. դե կռիվ եր, ինչ արած: Հա, մեր «Սասունցի Դավիթ» անունով այերոպլանը մեծ եր. ճիշտ Սասունցի Դավիթի նման ել կարծես ուժեղ լիներ եղ անպիտանը: Առաջին մասում չորս պրոպելլերներ ուներ, հողմաղացի թերերի նման, միքիչ կարճ: Ողը ձեղքելու համար ելին զբանք: Պատպում, ենքան արագ են պատպում, փոր ականջդ խլացնում ե նրանց ձայնը. — բը՝ բո, բը՝ բո... և ահա, ախպեր ջան, աչքերիս եմ զնում եղ փոքրիկ շնի նման հեռադիտակը ու նայում եմ ցած: Ներքենում ծուխ ե, ու մժեղների նման շարժվում են մարդիկ: — Բնը, կայարան ե, — մտածում եմ ու հեռախոսով կանչում ողաչուին: — Ընկերներ, կայարան ե, կա-չկա՝ ես մեր թշնամու զորքն ե: — Պատրաստվեցեք, — լսվում ե պատրասխանը: Հա, դե յես, իհարկե, գործի յեմ կոչում. ոռումքերն իմ մոտ են: Ցած ենք իջնում: Ելի յեմ նայում ճիշտ ե. զնացքը կանգնած ե, և շոգեմեքենաները ծխում են: Խսկուն եեթ պատրաստում եմ ոռումքերից մեկն ու ձեռիս պահում: Ծանը են եղ անպիտան ոռումքերը, խոզի գոճու նման կոր, չաղիկ ու ծանր: Թե քեֆդ ուզում ե իմանալ՝ ինչ ուժ

ունեն, բաց թող մեկը ու տես... Դե, ախափեր
ջան, բաց թողի եղ ոռումբը... հետո մի ուրիշը,
ու արախ... վայն եկավ նրանց նանի գլխին...

— Սպանեցիք. — Համբերեցին մանուկները:
— Սպանեցինք, վոնց չե, բաշխեցինք. դե
կոփվը կոփվ ե, ինչ արած. շատ ել խղճում ես,
կովի դաշտում տանձ ու խնձոր հո չես բաժա-
նի, — համ ել են տեսակ կովի, յերբ քասիբն ու
հարուստն են կովում... Դե դուք հաշվեցեք մի
ամբողջ գնացք, թշնամու եշելոնները, վոնց ցաք
ու ցրիվ տվինք, վոնց. ամբողջ կայարանը են-
պես շաղ տվինք, ենպես, վոնց վոր գիծ քամին
և շաղ տալի չոր դարմանը... Համա թե ժամա-
նակներ ելին հա... Եհ, հիշելու բաներ շատ կան...

Հառաչեց քեռի. Ստեփանը ու հետո ավելաց-
րեց.

— Դե վոնց բացատրեմ ձեզ եղ այերոպլանը.
սատանի նման մեկն ել չի թուշում մեր ես ան-
տեր գլուղի գլխով, վոր տեսնեք: Ախափեր ջան,
եղ այերոպլանը — ուժ ե, ուժ: Թե մեր կառա-
վարությունը այերոպլաններ շատ ունենա, ել
վոչ մի բուրժուց սիրտ չի անի հարձակվել մեզ
վրա: Այերոպլանը մենակ հո կովի համար չի,
կարելի յե նստել ու մի յերկու ժամում հազար
վերստ հանապարհ անցնել. հենց մեր իշխանու-

թյունը եղափես ել աշխատում ե անել, համա դե
եղ անտեր բուրժույները թողնում չեն վոր...
Բ.

Դարբնոցում Արամն ողնում եր իր հորը: Գա-
րուն եր ցանքսի, դաշտալին աշխատանքների
յեռուն շըջանը, յերբ դարբնոցի գործն ել յեռուն
եր ու դժվարին: Ամեն բան պահանջվում եր
շտապ, մեկի գութանի խոփը պետք եր ուղղել,
մյուսինը՝ սրել: Շատերին նոր կացին կամ բան
եր հարկավոր, և այդ բոլորի պատասխանը տա-
լու յեր գյուղի մի հատիկ դարբնոցը:

Դարբնոցում գործ ինչքան ուղես, միայն թե
իմացիր մուրճով զարկել: Յեվ Արամը զարկում
եր ծանր մուրճը սալին, զարկում շեշտակի ու
թափով. նրա ճակատից հոսում եր քըսինքը կա-
թիլ կաթիլ, իսկ մտքերը չարաձնի մկների նման
վազգում ելին նրա ուղեղի մեջ, և քեռի. Ստե-
փանի խոսքերը հնչում ելին նրա ականջին շա-
րունակ.

— Գյուղերը ծտերի բների նման կպել են
տափին:

— Այերոպլանով մենակ կոփվ չեն անում, կա-
րելի յե նրա մեջ նստել և յերկու ժամում հազար
վերստ հանապարհ կարել:

Ուղում ե հոր հետ խոսել, չի համարձակվում:

Վայ թե հայրը չհասկանա իր մտքերը ու ծիծաղի. — Այս դու չարաճճի, եղ ինչ բաներ ես մտածում, ժամանակ ես դտել:

Ժամանակ իսկապես վոր չկար: Արամը չի կարող նույնիսկ գնալ դաշտ, պառկել թավ խոտերի վրա ու նայել յերկնքին: Ել վնրտեղից, և ով նրան ժամանակ կտար բարձրանալու մեծ բլուրի գագաթը: Բայց նա անչափ սիրում ե բարձրանալ մեծ բլուրը, նստել նրա գագաթին ու դիտել իր առաջ փոփող բաց դաշտը: Ո՛, վորքան փոքրիկ ու խղճուկ են թվում նրանց գյուղի տները, նույնիսկ գյուղի յեկեղեցին նմանում եր մի փոքրիկ քարակուտի, վորի վրա աննշան ուռուցքների նման նշանակում ելին հինգ գմբեթ. ները:

Ապա դաշտը, հեռուն, շատ հեռուն փռփող արոտատեղերն ու մարգագետինները...

— Այս, յերանի թհեր ունենար ու թոչեր հեռու, հեռու:

Յերազում շատ անգամ նրան թվում եր, թե թոչում ե իրենց գյուղի վրայով: Թոչում ե բարձր, բարձր, իսկ նրան հալածում ե ինչ-վոր թշնամի: Յեզ միթե կարող են բռնել նրան. նա արդեն բարձրումն ե, տներից բարձր, յեկեղեցու գմբեթից ել բարձր:

Դժբախտություն մի անգամ միայն պատահեց:

Այդ այն ժամանակ եր, յերբ նա թոչում եր մի անծանոթ գյուղի վրայով: Նրա մեջքը պինդ կպավ ծխնելուցներից մեկին, ու մի ինչ-վոր սառը հեղուկ թրջեց նրա մարմինը:

— Ու՞Փ, — հառաչեց նա ցավից և յերբ բաց արեց աչքերը, իր կողքին տեսավ կանգնած հորը, վոր նրան աշխատում եր բարձրացնել: Արամի շապիկը թրջվել եր, մազերից կաթիլ-կաթիլ հոսում եր ջուրը...

Բանից պարզվեց, վոր նա քնած տեղը անկողնից թռել եր ուղղակի ջրով լիքը տաշտի մեջ, և նրա կողերը դիպել ելին տաշտին ու ցավում ելին:

— Համա թե լողացար հա, — կատակեց հայրը:

— Այս աղա, հա չես գժվել, — ավելացրեց զարմացած մայրը:

Գյուղի խրճիթ-ընթերցարանի վարիչը և գյուղի գրագետներից մեկը քեռի-Ստեփանն եր, վորը խրճիթի համար գուրս եր զրել մի շարք թերթեր և ժուրնալներ: Ամսագրերի մեջ Արամը տեսել եր այերոպլանի նկար, իսկ հետո խրճիթում գտել եր մի փոքրիկ գրքույկ, վորի մեջ մանրամասն կերպով հասկանալի ու պարզ նկարագրված եր, թե ինչպես յուրաքանչյուր վոք, յեթե ուզի, կարող ե իր համար այերոպլան պատրաստել, և նման այերոպլանը, վորը թոչում ե առանց շարժիչի, կոչվում ե սա վառնակ:

Մաքերը հանգիստ չելին տալիս Արամին, իսկ
ինքն ել իր հերթին՝ քեռի-Ստեփանին:

— Նա ամեն բան գիտե, նույնիսկ թռել ե
այերովլանով. թող սովորեցնի՝ ինչպես պատ-
րաստել ու դեկավարել:

Ճաշի ժամանակ դարբնոցից տուն ելին վերա-
դառնում հոր հետ միասին: Ճանապարհին պա-
տահեց քեռի-Ստեփանը: Արամը հորից յետ մնաց
և քեռի-Ստեփանին քաշեց մի կողմ:

— Հը, ի՞նչ կա:

— Մի ըոսե միայն:

Նրա մըստ գեմքը ծիծաղելի տեսք ուներ,
զլխի մազերը ցցվել ելին բարկացած աքորի
փետուրների նման, իսկ գոգնոցը մըից սեացել
և նմանում եր յերկաթե ու թիթեղի:

— Դե, ասա:

Այնքան ել հեշտ չեր խոսքեր գանելլ, և նա
միքանի բոսի լուել եր: Վախը պատել եր նըան:

— Դիտես ինչ, քեռի-Ստեփան, յես ուզում
եմ... բայց ի՞նչպես ասեմ քեզ, վոր լավ լինի:

— Դե, ասա՝ ինչպես կարողանում ես:

— Ասելը կասեմ, բայց... վախենում եմ ծի-
ծաղես:

— Յեթե ձգձգելու յե ալսպես, կարող եմ
խսպիս ծիծաղել: Յերկաթ հո չեմ կուլ տվիլ,
վոր կոկորդիս ցավից չեարողանամ ծիծաղել:

Արամը հապաց, գոգնոցով սրբեց իր զրթունք-
ները և թե ինչպես պատուեց բոլորը, ինքն ել
չիմացավ:

— Թռչել եմ ուզում.—վերջացրեց նա:

Քեռի-Ստեփանի գեմքին խաղաց մի ժպիտ,
վորը ավելի շուտ զարմանք եր արտահայտում,
քան ծաղր:

— Ի՞նչ ե, ցնդվել ես, այ տղա:

— Բակի յել չե, թռչել եմ ուզում, այնպես,
ինչպես վոր...

Քեռի-Ստեփանի գեմքին սահող ժպիտը փոխ-
վեց ծիծաղի:

— Վաղմւց ե, վոր մտածել ես այդ բանը:

— Ինչպես ասեմ քեզ... վաղուցվանից ե:

— Իսկ... չես փորձել:

Արամը հիշեց իր յերազները:

— Ինչպես չե, փորձել եմ:

— Ի՞նչ.—զարմացած հարցրեց քեռին:

— Յերազում...տաշտով լիբը ջրի մեջ լողացա:

Քեռի-Ստեփանը ել չկարողացավ պահել իր
ծիծաղը. Արամն ինքն ել ծիծաղեց:

— Վոչինչ, ոի վախենա:

— Կողս ու կուշտ ջարդեցի...

— Հա, հա, հա... այդ նշանակում ե ծով, ով-
կիանոս ես ընկել... հիգրովլան կա, վորը թըռ-
չում ե ողում, և լողում ծովի վրա:

Խոսակցությամբ աարված՝ նրանք դուրս լեկան
կցուղից բաց դաշտը ու նստեցին կանաչ խո-
տերի վրա:

Քեռի-Ստեփանը Արամին վոգեորիչ խոսքեր
ասաց:

— Ճարպիկ տղա յես դու, Արամ, և հնարա-
դետ: Յերևակալում եմ քեզ ծախ նման թոչելիս:

— Այդ տաշտի մասին ես խոսում...

— Հա, հա, հա .. չե. տաշտը հիմարություն
եր. ուր Կասպից ծովը. ուր քո ջրով լիքը տաշտը:
Գլխիդ մեջ շատ զարմանալի մտքեր են ծնում.
յերևում ե՝ ապագայում դոչաղ ողաչու յես դառ-
նալու, կարմիր ողաչու:

— Անպայման:

Նրանց դիմացը բարձրանում եր կանաչազարդ
Մեծ-Բլուրը, վորը հսկալի նման թլ կն եր տվել
կանաչ դաշտին ու նիրենել:

— Նայիր, շատ բարձր ե. — հարցրեց քեռի-
Ստեփանը:

— Այս:

— Մտածել ես դու... այնաեղ:

— Այս ..

— Գիտեմ, գիտեմ, վոր մտածել ես: Ով պետք
ե լինի են տիմարը, վոր կանգնի Մեծ-Բլուրի
կատարին ու արծվի նման թևեր ունենալ չցան-

կանաչ: Բայց յես ալժմ ուրիշ ըստն եմ տաելու
րեզ... զնանիք:

Յերկար խոսեցին նրանք: Մինչեւ արեի մայր
մտնելը: Արամն այդ որը մնաց քաղցած՝ առանց
ձաշի: Բայց ճաշի մասին նա յերբեք չմտածեց:

Յեզ յերբ նա տուն եր վերադառնում, դեմքին
խաղում եր մի անսահման յերջանկավետ ժպիտ,
ու նրա աչքին կարծես ել չելին յերեսում վոչ
գյուղի խրճիթները, վոչ յեկեղեցին, վորը միշտ
իր հսկա տեսքով գրգռել եր նրա նախանձը...
ամեն ինչ թաղվել եր խոր մշուշի մեջ:

Ի՞նչ եր մտածում այն ժամանակ Արամը, ինչ
մտքեր ելին ծնվել նրա ուղեղի մեջ, — վոչվոր
շգիտեր: Վերջը միայն իմացան այդ և նրա մա-
սին սկսեցին խոսել վոչ միայն իրանց գյուղում
կամ շրջանում, այս նրա համբավը տարածվեց
ամբողջ գավառում, և կենտրոնից նույնիսկ հա-
տուկ լուսանկարիչ յեկավ՝ նրա պատկերը նկա-
րելու համար:

Ամբողջ գյուղը լըագըերում կարդաց գովա-
սանական հոգվածներ, վորոնց զլխին միշտ զըր-
վում եր Արամի պատկերը, ճիշտ և ճիշտ նրա,
դարբին Սահակի վորդու պատկերը, զբողական
չթե շապիկը հագին ու հնամաշ զլխարկը զլխին,
վորի տակից յերեսում ելին թուխ ու գանգուր
մազերը, և փայլում աչքերը՝ խելացի փայլով:

Դարբնոցից քիչ հեռու մի մեծ ամբար կար:
Անպետք երնա, դեն շվրտված, վորի մեջ յերեմն
նետում եցին անպետք յերկաթի կտորներ և կամ
ձմռանը անասունների համար կեր եցին մթերում:
Հայրը վաղուց եր ուզում ծախել: Գին տվող
չկար:

— Կավ, թող մնա: Վոչվոքի չի խանգարում.
գուցե հանկարծ մի բանի պետք գա:

Ահա այդ ամբարում ազատ ժամերին շարու-
նակ զբաղված եր Արամը: Ինչ վոր չափում եր,
ձեռում, կարկինով նշաններ խազում ու յերեմն
ել տաջում կամ սղոցում: Հորը չեր համարձակ-
վում հայտնել: Հայրն ինքն ել չեր ուզում հարց
ու փորձ անել. զիտեր, վոր չարաճին նորից
ինչ վար բան ե հնարել: Բայց մի անգամ, յերբ
Արամը լարված սղոցում եր ամբարի տախտակ-
ներից մեկը, հայրը ներս մտավ ու մոտեցավ
նրան:

— Ի՞նչ ես ելի աղմկում, ինչ ծրագրեր ես
կազմել նորից. տախտակները ինչու յես զուր
տեղը փչացնում, — հարցը եց նա:

— Վոչինչ... սայլի համար... պատրաստում
եմ, — պատրախանեց Արամը:

— Ի՞նչ սալլ, ինչ բան. ով ե քեզ պատվիրել:

— Քեռի-Սաեփանին խոստացել եմ:
— Սուտ ես ասում, — ընդհատեց նրան հայրը, —
յես լավ եմ ճանաչում քեզ. դարբնոցից ժամերով
բացակայում ես. ինչ ես ելի մտածել ճիշտն ասա:

Արամը չեր ուզում պատմել. վայ թե հանկարծ
իմանան գլուղում, ել ձեռներից պըծնել չի լինի,
ծաղրի առարկա կղառնա:

— Դե ասա, վոր վոչվոքի չես ասիր:
— Կավ, չեմ ասիր:
— Ճիշտ ես ասում...
— Այ քեզ բան, խաչով ու ժամով հո յերդ-
վելու չեմ:
— Դե տուր ձեռդ:
— Հը, խելքդ հո չես թոցըել:
— Դե տուր, ասեմ:
— Լավ, բռնիր:

Արամը հորն ամեն բան պատմեց: Ցուց տվեց
նաև այն գորուկը, վորի մեջ կային պլաններ և
մողելների պատկերներ:

— Ոհո, — թափահարեց գլուխը հայրը, — ահա
թե ինչ... ինչպես յերեսում ե, յերազում զուր
տեղը չես խոսում ու յերեմն ել թռչում ջրով
լիքը տաշտի մեջ: Ա՛յ տղա, գժվել ես, ինչ ե,
ուզում ես ժամանակից շուտ ջախջախել գլուխդ:

— Ըսկի յել չե, գլուխս ինչու պիտի ջախջա-
խեմ:

— Բա ինչ կանես: Կարծում ես՝ թոշելու յես
քո եղ վայտի կտորներով: Ինչ ես սարքում,
ինքու եւ չգիտես. վոչ դուխն ե ջոկվում քո սա-
վառնակի, վոչ պոչը: Խաղալը լավ բան ե, բայց
խաղալուց հետո խնդրում եմ՝ հավաքես վայտերը:

Արամը հասած արեածաղկի նման կախեց իր
գլուխը. ինչ վախենում եր կատարվի, կատարվեց:

— Ապի, ապի,—թոթովեց նա.—իսկ յես... յես
կարծում ելի, թե դու ինձ կողնես, դու... դու...
ծաղրում ես միան: Հիմա ամբողջ դուզն ել կի-
մանա, ու ծաղրի առարկա կդառնամ:

— Անպայման: Քեզ տեսնելիս կծիծաղեն և
քո յետեից Թոչող Արամ կկանչեն:

Տեսներով փորդու արցունքները, դարրինը
մեզմացավ ու կատակի ավեց.

— Դե լավ, ինչ ես մռութներդ կախել, ախր
դու բոլոր պառավերին ուզում ես վախեցնել և
ժամանակից շուտ են աշխարհն ուզարկել:

— Կորավ, կորավ ամեն բան, պետք ե ջարդ
ու փշուր անել:

Արամն ավելի կախեց իր գանգրահեր զլուխն
ու լուց: Հայրը նախում եր նրա գանգուր մտղե-
րին և պահ մի լուռ եցին յերկուսն ել:

— Ի՞նչ ես խռովկան յերեխի պես կախել
դուխուդ, դե մի վեր նախիր, — ասաց հայրը և բար-
ձրացրեց նրա զլուխը:

Արամը նայեց հորը. նրա զեմքին սահում եր
մեղմ ժպիտը. Ծանօթ եր այդ ժպիտը Արամին.
այդպես բարի և մեղմ ժպտում եր հայրը այն
ժամանակ, յերբ քաղաքից վերադառնալիս բան
եր նվիրում նրան: Նա քաջալերված բռնեց հոր
ձեռը,

— Ապի.

— Ի՞նչ ե:

— Կողնես... այնպես չե:

— Այ թե խելքի տոպրակն ես յեղել հա: Բա
ինչ ելիր կարծում: Միթե մենք միասին չենք աշ-
խատում դարբնոցում, միասին չենք զարկում
կոանը սալին. զլուխ ես, զլուխ Յերկու կես
արած լինձորի պես նման ենք իրար: Միթե միասին
չենք հնարում, կամ ինչպես զլուզացիք են ասում,—
որոչեր չենք զանում զանազան գործիքների հա-
մար: Այդպես ե, յերկուսն ել անհանգիստ ենք,
ու մի որ ել յերկուսով զլիներիս մի փորձանը
կըերենք:

— Ապի ջան, ախր յես չափել եմ... մտածել:

— Դե լավ, շատ մի մտածի: Ցուց տուր տես-
նեմ եղ զրքուցիլը, յես ել քիչ-միչ հասկանում եմ
այդ գործից. զինվոր յեղած ժամանակս քաղա-
զում աշխատել եմ այերոպլանի գործարանում:

— Այս, ապի, հնար լիներ՝ քաղաք.



— Վոչինչ, քաղաք տեղափոխվելու ժամանակն
ել կգա:

Նստեցին յերկուսն ել ու սկսեցին անտղել
գըքուկը:

— Այստեղ ասված ե, - «Կաըող ե քամու հո-
սանքին դիմադրել, յեթե թևերը չափով կտրված
լինեն: Այդ պատճառով ել կարկինով պետք ե
չափել, ապա կտրել»: Դե լավ ե, վոր մեղ մոտ
կարկին ել կա, փայտ ել. մնում ե մեղ զնալ
քաղաք ու զնել մնացածը:

Ճաշի ժամանակ նրանք յերբեմն նայում ելին
իրար ու ծիծաղում:

— Ի՞նչ եք բարկացած կատուների նման մրո-
մըում, — հարցրեց մայր:

— Վոչինչ... հենց ենպես...

Կիրակի որը նրանք քաղաք գնացին: Բավա-
կանին մեծ զումար ծախսվեց սավառնակի հա-
մար:

Արամը ինքն ել ափսոսեց. նա նույնիսկ ու-
ղում եր յետ կանգնել իր մտադրությունից:

— Վոչինչ, մի մտածի, նորից կաշխատենք: —
Հանգստացրեց նրան հայրը:

Աշխատանքը յեռում եր: Յերեկը դարբնոցում,
դիշերը ամբարում աշխատում ելին հայր ու վոր-
դի: Յեկ վոչվոք չգիտեր գլուղում, թե ինչ է
կատարվում դիշերները ամբարում: Հարցնաղնե-
րին դարբինը պատասխանում եր.

— Աշխատանքներու շատ ե, ստիպված ենք
յերբեմն ել դիշերով աշխատել: Սազի համար
մասեր ենք պատըաստում:

Դ.

Սավառնակի կառուցման աշխատանքները հա-
մարլա թե վերջանում ելին:

Արամն այդ ժամանակամիջոցում բոլորովին
փոխվել եր. քիչ եր ուտում, համարյա չեր քնում,
մազերը չորացած սեղերինման ցցվել ելին գլխին,
և յերեսին երեսում ելին կնձիռներ: Կարծես նա
մեծացել եր տասը տարով: Աչքերը միայն ավե-
լի վառվուն ելին դարձել, և լավ նայողը նրա
դեմքին կնկատեր անհուն յերջանկությունից
փայլող մի ժպիտ:

Առաջ թվում եր նրան, թե իր ձեռնարկած
գործը մատնվելու յե անհաջողության, սավառ-
նակը զլորվելու յե անդունդ. սակայն յերբ նա
ստուգեց յուրաքանչյուր մասի ձշտությունը,
կարկինով նորից ու նորից չափեց բոլոր մասերը,
փորձեց պնդությունը, անիմսերը, դեկի կազմու-
թյունը, յեկավայն յեզրակացության, վոր դժբախ-
տություն չի պատահի:

Քեռի. Ստեփանն ել ասում եր.

— Գլխավորն այն ե, վոր չփախենաս ու
չշփոթվես: Ներքե մի նայիր, թե չե գլուխդ
կպատի, խելքամաղ կլինես:

Սավառնակը արդեն պատրաստ էր, վերջին
անգամ յերեքով փորձեցին զեկը, թերը Ան-
քան թեթև եր ամեն բան, այնքան տեղին: Չհա-
յած իր հսկայական մեծության՝ կարելի յեր ա-
զատ շարժել մի ձեռով:

— Դե, տղաս, թոշում ենք, այնպես չե՞:
— Հա, թոշում ենք, ապի՞:

Ու մտածեցին յերեքով, թե յերբ հնարավոր
եր փորձել սավառնակը: Չեին ուզում, վոր ժո-
ղովուրդ հավաքվի:

— Սատանան տանի, զուր տեղը դալմաղալ
են անելու, — ասում եր հայրը:

Բայց բանը բանից անցել եր արդեն: Գլու-
զում խոսում ելին, թե ինչպես գիշերները ամ-
րարում վառվում եր լուսը, և թե ինչպես դար-
բին Սահակը իր տղայի ու քեռի. Սաեփանի հետ
միասին ինչ վոր թոշելու մեքենա յե շինուած:

— Զե, ես անիծածների ձեռից պրճնել չի
լինուած. պետք ե մի կիրակի որ ընտրել, պատա-
րագի ժամանակ, յերբ ժողովուրդը ժամ գնացած
լինի:

Վորոշեցին ընտրել Վարդավառի կիրակին,
յերբ ժողովուրդը յեկեղեցում պետք ե լիներ
անպայման: Սակայն այդ ել չոգնեց:

Վարդավառի կիրակի որը վաղ առավոտվանից
ժողովուրդն սկսեց իրոնիկ դարբնոցի առաջ:

Նույնիսկ առավոտվան ժամերգությանը վոչ-
վոք չգնաց յեկեղեցի:

— Այ քեզ բան, Դե ինչ արած, ել ուրիշ
ձար չկա, պետք ե փորձել:

Խոնված ժողովուրդն անհամբեր սպասում եր,
թե ինչ ե լինելու: Շատերն զգուշությամբ մո-
տենում ելին ամբարին և զաղտագողի աչք
ածում ծակոտիներից ներս:

Վոչինչ չելին տեսնում, բացի մեծ հողմաղացի
նման յերկու թեկերով ինչ վոր առարկալից: Վո-
մանք իրար մոտ խոնված՝ պատմում ելին ինչ-
վոր բաներ ու ցուց տալիս ամբարը:

— Ի՞նչ կա, ինչու յեր հավաքվել. — սրտնեղած
հարցնում եր դարբինը:

— Հենց այնպես:
— Վարդավառ ե, զնացեք ժամերգության,
ժամում մարդ չկա:

— Վոչինչ, տերտերը յոլա կտանի, առանց
են ել ժամը միշտ զատարկ եւ կիրակի յե, զբո-
նում ենք ելի:

— Իսկ դու շուտ արա, շուտ, դուրս բեր
տեսնենք՝ եղ ինչ բան ե: Տերտերին շատ ես
կարոտել. ինչու ինքդ ըսկի ժամ չես գնում, —
կանչեց մի գյուղացի:

— Սատանան ձեզ տանի, զե, ինչ արած, —
պատասխանում եր նրանց դարբինը:

Գլուղիսորհիդի նախադահ Աթինանց Փիլոսոլ
խուռն բազմությունը ձեղքելով՝ սարսափած
կանգնեց դարբնոցի առաջ:

— Ես ի՞նչ դալմաղալ ե, ես ի՞նչ եք շինել —
հարցրեց նա հուզված:

— Ի՞նչ ես կարծում, ի՞նչ կարող ելինք շի-
նել:

— Յես ի՞նչ իմանամ: Խալիսը հազար ու մի
բան ե խոսում:

— Թող խոսի, մեզ ի՞նչ: Թե դու լավ գյուղ-
խորհրդի նախագահ ես, խալիսին ժամ ուղարկի:

— Ո՞չո, այդ եր պակաս: Յես գյուղխորհրդի
նախագահ եմ, և վոչ թե տիրացու կամ սար-
կավագ. ով ուզում ե, թող ժամ յերթա, ով չի-
ուզում, թող չգնա: Դու են ասա, խեղճ երեխին
ջարդ ու փշուր ես անելու:

— Ե, քո՞ ի՞նչ գործն ե:

— Վանց թե: Ախալեր, ախր եսոր յես խորհրդի
նախագահ եմ, ես զյուղի կառավարիչը. վաղը
կզան կասեն. «Դու իշխանության ներկայացու-
ցիչ եմ, ինչու թուլ տվիր սպանելու խեղճ
երեխին»:

— Մի վախենա, վոչինչ չի լինի, համա թե
վախեցել ես հա, — քահ. քահ ծիծաղեց դարբինը:

— Դե, վոր ետենց ե, յես պատասխանատու
չեմ, իմացմը:

— Լավ ախալեր ջան, գնա բանիդ:

— Սպասիր... լավ չե՛ լինի՝ ստորագրություն
տաս ինձ, վոր...

— Վոր ի՞նչ:

— Վոր սպանության մեջ...

— Դե, գնա բանիդ, — ասաց սրանեղած դար-
բինը:

Քեռի-Ստեփանն ել յեկավ ու սկսեցին ամ-
բարի գռները բանալ: Ժողովուրդն սկսեց ովնել:
Հանդիսականների քար լուսթյան տակ Արամը,
հայրը և քեռի-Ստեփանը սկսեցին դուրս բերել
սավառնակը: Փաքրիկ անիվների վրա սահելով,
թեթև գուրս յեկավ ամբարից այդ հանելուկալին
գործիքը: Ժողովուրդն սկզբում զարմացած՝ ճա-
նապարհ տվեց նրան, իսկ հետո սկսեցին հետեւ
սավառնակին: Վոմանք՝ նախորոք գուշակելով
լանի եցությունը՝ վաղուցվանից բարձրացել ելին
Մեծ. Բլուրի կատարը և սպասում ելին:

Արամի ընկերները վագում ելին սավառնակի
յետեից՝ աչքերը չեռուցնելով նրանից: Այնպես
ելին ուզում, վոր Արամը նայի իրենց, թեկուզ
միայն թեթև ժպտա. ախր չե՛ վոր ընկերներ են
յեղել:

Բայց վո՞չ: Արամը քալում և սավառնակի
յետեից առանց իր շուրջը նայելու, և քամին

միայն ծածանում ենրա գանդուլը մազերը դաշտի
սեղերի նման:

Ու թվում եր մանուկներին, թե դա իրենց
ընկեր Արամը չե, վորը շարունակ իրենց հետ
կոճի յեր խաղում կամ լողանում դետակում:

— Հպարտաց ել ե, — տառում ելին իրար:

Ծով ամբոխի մեջ կար միայն մեկը, վորը չեր
ուրախանում: Դա Արամի մայրն եր: Նա քացում
եր Արամի յետեկից և յերեմի գոզնոցով սրբում
իր թաց աչքերը: Շատ եր խնդրել վորդուն, հա-
մազել ամուսնուն, բաց վոչխնչ դուրս չեր յեկել:
Վորոշել եր գիշերը կացնով ջարդ ու փշուր ա-
նել այդ հրեշին, սակայն այդ ել չեր հաջողվել:
Արամը քնում եր ամբարում: Ամուսինն ել իմա-
ցել եր ու բարկացած վոտները խփել հատակին:

— Զհամարձակվես ձեռք տալ: Նա հո կին չե,
վոր տանը նստած հավ ու ճուտին հետեւ:

Յեվ այժմ ել նա հետեւմ եր կարծես իր վոր-
դու զագաղին, վորին տանում ելին դեպի գե-
րեզման: Նա դժվարությամբ եր շունչ քաշում,
մտածում եր նորից խնդրել, գուցե թե չմեր-
ժելին:

— Խնդրելու յեմ, վոտներն ընկած տղաչելու,
գուցե ամաչի խալխից ու խղճա ինձ. «Զավակս,
անդինս, իմ անուշ բալիկս», կասեմ նրան:

Արցունքներին աղբյուրի նման հոսեցին նրա
տչքերից:

Ահա և սարը:

Սավառնակը քաշելով բարձրացնում են վեր:
Վախուցած ծտի նման թրթոռում ե Արամի սիրառ:
Նա և տեսնում է այդ ծով ամբոխը, և չի տես-
նում: Կարծես ամեն բան ինչ վոր մշուշի մեջ
է թաղվել: Ժողովուրդն ել, վոր կատակելով
բարձրանում եր վեր, յերբ հասավ սարի կա-
տարը և կանգնեց այն փոքրիկ բացատուն, վոր-
տեղից պետք ե թոշեր սավառնակը, քարի նման
լուց, Բոլորը սարսափած հայացքները հառում
ելին մեկ Արամին, մեկ անդունդին ու սպասում
վախճանին:

Սավառնակի տեղը վորոշվեց. նա դրվեց ան-
գունդից հիսուն քայլ հեռու: Խոր եր անգունդը,
մարդ սարսափում եր ներքեւ նայելիս, միայն
նրանից քիչ հեռու տարածվում ելին դաշտերն
ու մարգագետինները:

Ժողովուրդը շրջապատեց սավառնակը:

— Հեռու, հեռու գնացեք, ձամպա տվեր,
լովում ելին զանազան ձախներ:

Բոլորի դեմքը սարսափ եր արտահայտում:

Արամի ընկերներն անգամ, վորոնք առաջ նա-
խանձում ելին նրան, մի կողմ քաշվեցին ու
սարսափահար փսփսում ելին:

— Արես վկա, ջարդ ու փշուբ ելինելու...
— Ջարդ ու փշուբն ել խճաք ե:
— Ախպեր, ինչ ել վոր տան, յես չեմ թռչի:
— Յես ել:
— Յես ել...

— Աստված ջան, զու փրկիր, զու հասիր
ոգնության, — մըմնջում եր ինչ-վոր պառավ կին, —
սատանի փաչ ե դառնալու, տեր, զու փրկիր...
ես ինչ փորձություն ես բերում մեր գլխին...
տեր վողորմած աստված, տեր բարերար...

Փողովուրդը լուս հետևում եր, թե ինչ ելինելու սրա վերջը:

b.

Ժողովուրդը հավաքվում եր, հայ հավաքվում:
Վորտեղից վոր ե, յեկան հարեան զյուղի կոմիերիտական ըջիջի անդամները, Բջիջի շարտուղարը սիրալիր գեմքով մոտեցավ Արամին և սեղմելով նրա ձեռը՝ ասաց.

— Ալդ գու յես շինել, ընկեր:
— Ալո՞ Մենք յերեքով:
— Ելի նվրեր:
— Հայրս:
— Վարտեղ ե նա:
— Հըեն սավառնակի մոտ ե:
— Մենք, համենայն դեպս, մեզ հետ անհրաժեշտ

համարեցինք բերել գյուղի բուժակին: Նա այն-
տեղ ներքեռումն ե:

— Եղ մեկը լավ բան եք արել:
Համազգեստը հագին, ձի նստած սրաբշավ յե-
կավ շրջմիւպետի ոգնականը:

— Այս, տեր աստված, ամբողջ կառավարու-
թյունն եկել ե թամաշի, — ձանում ելին կանայք:
Միլպետի ոգնականը մոտեցավ գյուղիսորհրդի
նախագահին.

— Սա ի՞նչ անկարգություն ե:
— Յես վոչինչից խաբար չեմ, — արդարացավ
նախագահը:

— Ո՞վ պետք ե հետեւ կարդ ու կանոնին:
— Ինձ վոչինչ չեն հայտնել. — կմկմաց նորից
Փելոսը:

— Ո՞վ ե այս բոլորի պատասխանատուն:
— Յես ի՞նչ անեմ, ստորագրություն պահան-
ջեցի, չտվին, ընկեր միլպետ, ասացի ցրվեք—
ցըրվեցին: Դե, ել ի՞նչ կարող ելի անել:
Միլպետի ոգնականը դարձավ դեպի ժողովուրդը.

— Ցըրվեցեք:
Բայց նրան այս անդամ պատասխանեցին հեղ-
նանքով.

— Ո՞հո, յեկավ, ելի:
— Ղոչաղիս նայեցեք:
— Առանց քեզ ել յոլտ կերթանք:

Միւլեաի ոգնականը հրամայեց ավելի հատու.

— Տասը քաղ աջ և տասը քաղ ձախ, մարշ—մեկ, յերկու, յերեք...

— Այ լավ բան արեց, յես իմ հոգին. յետ, յետ, ճամպա բացեք. — ակսեցին կանչել զյուղացիները:

— Ճամպա, ընկերներ, ձեր պատճառով կարող ե սավառնակին դժբախտություն պատահի, — կանչեց նորից միլպետը:

Յերբ ժողովուրդը մի կողմ քաշվեց, և սավառնակի համար հարկ յեղած ճանապարհը բացվեց, հայրը մոտեցավ Արամին:

— Իե տղաս... պատրաստ եւ:

— Կարելի՞ յե նստել:

— Նստիր:

Բայց մայրն սպասում եր հենց այդ վայրկյանին, Ընկալ գետին և փաթաթվելով տղայի վոտներին՝ սկսեց կանչել.

— Չեեմ թողնի, չեե, չեմ թողնի... իմ մինուճար բալիկին չեմ թողնի անդունդը գլորվելու. Սպանեցեք ինձ, կենդանի-կենդանի թաղեցեք .. չեմ թողնի, չե... Յես եմ նրան ծնել, տանջանքով սնել, մեծացրել. Սիրելիներս, հարազատներս, ախ, ես ինչ փորձանք եք բերում զիմիս.

Յետեաի շարքերում արդեն լովում ելին ձախներ: — Պարզ ե, վոր պիտի մեռնի... ել ինչ կարող է լինել:

— Զպեաք ե թույլ տալ:

— Այդ կաղ դեն ե ամեն բանի հեղինակը:

— Ինքը թուել ե, վոտը կոտրել՝ հերիք չի, հիմա յել ուզում ե խեղճ տղայի զիմին նույն փորձանքը բերել:

— Թող ինքը թոչի, ինքը ինչու չի թոչում:

Լսում եր այս բոլորը քեռի. Սահմանը: Այդ խոսքերը համնում ելին նաև Արամի հոր՝ դարբին Արհակի ականջին, վորը արտաքուստ թվում եր հանգիստա...

— Ի՞նչ եք չար ագուամերի նման կոկում. մեր զիմին շան վսանոց հարկավոր չե, — հնչեց դարբնի հատու ձայնը, — սովորել եք վորդի նման սողալ կամ մայիսյան բղեղների նման մտնել ձեր զետնափոր տնակները: Ո՞վ ձեզ կանչեց այստեղ կոկուալու, դե, լոեցեք, լոեցեք, քանի ուշ չե:

Բայց նրա սիրալ շատ ցավում եր, և այդ ծով ամբոխի մեջ ամենից խոր նա յեր զգում վասնգի սարսափը:

— Դե, ժամանակ ե:

Արամը մի կերպ պոկվեց մոր զրկից: Մայրը ուղեց բոնել նրան, բայց նվազած ընկավ գետին:

Գյուղացիներից մեկը բարձրացրեց նրան ու տարագ մի կողմ:

Յերբ Արամը տեղափորվեց սավառնակի մեջ, քեռի Սահմանը և հայրը բռնեցին սավառնակի

աջ և ձախ կողքերից, հրեցին առաջ, վորակազի
թափ առնի:

Փոքրիկ անիվսերն արագ շարժվեցին, սավառ-
նակն առաջ անցավ. յերբ մոտեցավ անդունդին,
թափն ավելի ուժեղացրեց... ու անդունդին դեռ
չհասած՝ բոլորը նկատեցին, թե ինչպես սավառ-
նակի անիմսերը կտրվեցին գետնից: Շուտով
սավառնակը բարձրացավ վերև, կարծես թե կախ-
վեց անդունդի վրա:

Այն ժամանակ միայն ժողովուրդն աղմուկով
ու աղաղակով հոսեց ներքեւ՝ գետի ձորը:

— Բնինում ե, ընկնում, — կանչեց մեկը:

Մի վայրկան միայն սավառնակը թեքվեց, սա-
կայն նա շուտով ուղղվեց, թռավ անդունդի
վրայով և անցավ բաց գաշտերի վրա:

Աղմկելով ու ճիւտելով իրար՝ գյուղացիները
վագում եին գետի դաշտ: Շուտով ամբողջ գաշտը
ծածկվեց խալտարղետ զգեստներով, մարդկանց
ու յերեխաների աղմուկներով ու աղաղակներով.

— Գնաց, գնաց:

— Տես, թեքվում ե գետի գյուղ:

— Ո՞հ, շըշաններ ե գործում գյուղի վրա:

— Ե՛ւ լավ զբոսանք:

— Տեր աստված, ես ինչ հրաշք ե:

Սնշարժ թերբը լայն պարզած՝ սավառնակը
հակա թռչունի նման պատրաներ եր՝ գործում

գյուղի վրա: Իսկ ժողովուրդն աղմկելով վազում
եր սավառնակի յետեկից, ուրախությունից ու
զարմանքից անթիվ զլիսարկներ եին թռչում
ողի մեջ:

Ուրախ չեր միայն գյուղի տերտերը, վորը
շարունակ զարկել եր տալիս յեկեղեցու զանգակ-
ներն ու սպասում ժողովրդին:

Բայց վճրտեղ, նույնիսկ յեկեղեցու մշտական
հաճախորդ պառավելու անդամ գնացել ելն
տեսնելու թամաշան. յեկեղեցին զատարկ եր,
բոլորովին դատարկ:


— Ելի զարկիք, բարձր, միքիչ ել բարձր, — կան-
չում եր նա ժամկոչին:


Յերբ ժողովրդի ուրախ աղմուկը նրա ական-
ջով ընկավ և տեսավ, վոր բոլորը վերև են նա-
շում, նա ակնոցները աչքերին զրեց ու նայեց
վերև:

— Անիծվեք դուք, անիծվեք, — ասաց նա ու
ներս մտավ յեկեղեցի...

Միայն անտեղ, հեռու բլուրի զագաթին, բաց
ձակատները հովին և աչքերն անթարթ սավառ-
նակին հառած՝ որտատրով սպասում եին Արամի
հայր գարբին Սահակն ու քեփ-Ստեփանը:

Իոկ հոր կողքին, ամուսնուն կոթնած՝ մեռելի
նման գժգույն գեմքով՝ հայացքը՝ իր սավառնոց
զավակին հառած՝ կանգնել եր Արամի մայքը:





ՀՀ Ազգային գրադարան



NL0403103

5574